Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1865 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ 2012-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Իրականացնող մարմինները		Ֆինանսավորումը
		պատասխանատու մարմինը	համակատարողը	
2012 թվականի ընթացքում կատարման ենթակա միջոցառումներ, որոնց շրջանակներում կատարվելիք օրենսդրական փոփոխությունները պետք է կիրառվեն 2013 թվականի հունվարի 1-ից				
1.	Նորովի սահմանել ֆինանսական ծառայությունների մասով ԱԱՀ-ից ազատման մոտեցումները	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	Ֆինանսավորում չի պահանջվում:

2.	Ներդնել հարկային խթանների վերաբերյալ բոլոր օրենսդրական դրույթների՝ առավելագույնը 5 տարվա ընթացքում ինքնաբերաբար դադարելու մասին դրույթ և ապահովել խթանների հիմնավորումը ծախսեր-օգուտներ վերլուծություններով	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում:
3.	Վերացնել նվազագույն հարկը՝ զուգահեռաբար վերանայելով և կատարելագործելով կանխավճարների համակարգը	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում:
4.	Ներդնել հաշվեկշռային նվազող ամորտիզացիայի ռեժիմ՝ ակտիվների խմբավորմամբ («pooling»)	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում:
5.	Դիտարկել Համահայկական բանկի հարկային «արձակուրդը» վերացնելու նպատակահարմարությունը	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում:
6.	Ներդնել զանգվածային գնահատման համակարգչային համակարգեր, որոնցով գույքի կադաստրում կիրականացվեն պարբերական վերագնահատումներ	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ տարածքային կառավարման	Պահանջվում է արտաքին ֆինանսավորում:

			նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	
7.	Վերացնել հարկային ազատումներ շնորհելու՝ տեղական ինքնակառավարման մարմինների հայեցողությունը և իջեցնել 3 միլիոն դրամի հարկային շեմը	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	Ֆինանսավորում չի պահանջվում:
2013 թվականի ընթացքում կատարման ենթակա միջոցառումներ, որոնց շրջանակներում կատարվելիք օրենսդրական փոփոխությունները պետք է կիրառվեն 2014 թվականի հունվարի 1-ից				
8.	Նախատեսել ԱԱՀ-ի հաշվարկով առաջացած դեբե-տային մնացորդները հաջորդ ժամանակաշրջան տե-ղափոխելու առավել հարմար և ավտոմատացված գործընթացներ և օրենսդրական փոփոխությունը կատարելուն հաջորդող հաշվետու ժամանակաշրջան-ների դեբետային մնացորդները վերադարձնել բոլոր հարկ վճարողներին, որոնք մի քանի ժամանակա-շրջան շարունակ հաջորդ ժամանակաշրջան են տեղափոխում դեբետային մնացորդները	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Պահանջվում է արտաքին ֆինանսավորում:

9.	Ամբողջությամբ անցում կատարել ԱԱՀ-ի հաշվանցման «հաշվեգրման» սկզբունքին	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Պահանջվում է արտաքին ֆինանսավորում:
10.	Դադարեցնել եկամտահարկով հարկման նպատակով ուսման վճարի գծով նվազեցումների իրականացումը	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	Ֆինանսավորում չի պահանջվում:
2014 թվականի ընթացքում կատարման ենթակա միջոցառումներ, որոնց շրջանակներում կատարվելիք օրենսդրական փոփոխությունները պետք է կիրառվեն 2015 թվականի հունվարի 1-ից				
11.	Կապիտալից եկամտի հարկումը (գույքի արժեքի հավելաճը) տեղափոխել եկամտահարկով հարկման դաշտ	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում:
12.	Դիզելային վառելիքի և բենզինի նկատմամբ կիրառել ակցիզային հարկի նմանատիպ դրույքաչափեր, որոնք արտահայտված կլինեն մեկ լիտրի հաշվով կոնկրետ գումարի տեսքով և նախատեսել դիզելային վառելիքի և բենզինի լիարժեք հարկումն ԱԱՀ-ի դաշտում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում:
13.	Ավելացնել գույքահարկի հավաքագրումները՝ կադաստրային գնահատումները ներդաշնակեցնելով իրացվող գույքի և հողի վաճառքի արժեքներին	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի	Ֆինանսավորում չի պահանջվում:

			կադաստրի պետական կոմիտե ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	
14.	Վերացնել ծխախոտային արտադրանքի, գրքերի և պարբերականների արտադրության և վաճառքի, գույքի և դժբախտ պատահարների ապահովագրական վճարների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի վաճառքի, կիսավարտ ոսկերչական զարդերի վաճառքի, ձեռագործ գորգերի՝ արտադրողների կողմից վաճառքի և օտարերկրյա անձանց տրամադրվող զբոսաշրջային ծառայությունների մասով նախատեսված՝ ԱԱՀ-ից ազատումը	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ